Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
Ur-80

14075

ԴԺՈԽՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԸ

ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ,

ԿՈՄՍ Լ. Ն. SOLUSOB

Թարգմանեց Ռուսերէնից
ՍԵԴՐԱԿ ԱՒԱԳԵԱՆՑ

391.71
S-80

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1906

31-71
-80

„Пушкинская Скоропечатня" С.-Петербургъ, Лит. 4.

19 NOV 2010

ԴԺՈԽՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԸ.

ԿՈՄՍ Լ. Ն. SOLUSOՅ.

ԴԺՈԽՔԻ ԿՈՐԾԱՆԵԼԸ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԸ.

I.

Այս դէպքը պատահեց այն ժամանակ, երբ Քրիստոսը ուսուցանում էր իւր վարդապետութիւնը։ Այդ վարդապետութիւնը այնքան պարզ էր և հեռևել նրան այնքան հեշտ էր, նա այնպէս ակնյայտի ազատում էր մարդկանց դանազան չարիքներից, որ չէր կարելի չնդունել նրան և ոչ մի բան չէր կարող հանդիսանալ իբրև արգելք նրա տարածմանը։

Սանդարամետների հայր և պետ—Բեհեղզեբուղը խիստ շփոթուած էր։ Նա զգում էր, որ եթէ Քրիստոսը չհրաժարուի իւր վարդապետութիւնից, այն ժամանակ մօտենում է իր տիրապետութեան վախճանը։ Չնայելով դրան, նա չէր վրհատւում, գրգռում էր փարիսեցիներին և դպիրներին Յիսուսի դէմ, իսկ նրա աշակերտներին խորհուրդ էր տալիս թողնել նրան մենակ և հեռանալ նրանից. նա յուսով էր, որ այս բոլոր դաւադրութիւնները կստիպեն Յիսուսին հրաժարուել իւր վարդապետութիւնից, իսկ հրաժարումն կ'ոչնչացներ վարդապետութեան արմատական ոյժը։

Գործը վճռուեց խաչի վրայ։ Երբ Քրիստոսը խաչից բացականչեց. «Աստուած իմ, Աստուած, ընդէր թողայր զիս», Բեհեղզեբուղը ուրախացաւ, նա վերցրեց Քրիստոսի համար պատրաստուած շղթաները, փորձեց իր վերայ և տարքեց նրանց այնպէս, որ շղթայուած Յիսուսի ազատումն անհնարին դառ-

23.08.2013

14078

նայ։ Բայց ահա խաչի վրայից լսուեցին հետևեալ խօսքերը. «Հայր, ներեա՛ զսոսա, զի ոչ գիտեն՝ զի՞նչ գործեն». և յետոյ Քրիստոսը բարձրաձայն ասաց. «ամէն ինչ կատարեալ է» և փչեց իւր շունչը։

Բեհեղզեբուղը հասկացաւ, որ ամէն ինչ նրա համար կորած է։ Նա ուզում էր քանդել շղթաները իւր ոտքերից և փախչել, բայց չկարողացաւ շարժուել տեղից. շղթաները ամրացրել էին նրա ոտքերը։ Նա տարածեց թևերը և ուզում էր թռչել, բայց իզուր։ Բեհեղզեբուղը տեսաւ Յիսուսին, որի դէմքը փայլում էր. Յիսուսը կանգնեց դժողքի դռան առաջ։ Դժոխքից մի առ մի դուրս եկան մեղաւորները, սկսած Ադամից մինչև Յուդան։ Բոլոր չար հրեշտակները անյայտացան, իսկ դժողքի պատերը փուլ եկան։ Բեհեղզեբուղը չէր կարողացաւ այլևս տանել այդ բոլորը, նա բարձրաձայն աղաղակեց. գետինը պատռուեց և նա գլորուեց անդունդ։

II.

Անց կացան 100, 200, 300 տարի։ Բեհեղզեբուղը չէր հաշուում ժամանակը։ Նա ընկած էր անշարժ և աշխատում էր չմտածել պատահածի մասին, բայց այնուամենայնիւ նա չէր կարողանում չմտածել և ատում էր նրան, ով հանդիսացել էր իր կորստի պատճառը։

Բայց յանկարծ,—նա չէր յիշում, թէ ինչքան ժամանակ էր անցել այդ դէպքից յետոյ, լսեց վերևից ձայն, ճիչ, ատամների կրճտոց և հառաչանք. Բեհեղզեբուղը բարձրացրեց գլուխը և սկսեց լսել։

Դժողքի վերականգնեցուիլը Քրիստոսի յաղթանակից յետոյ անհաւատալի էր, բայց չնայելով դորան, վերևից աւելի ու աւելի պարզ լսում էին ատամների կրճտոցը, ճիչը և հառաչանքները։

Բեհեղզեբուղը բարձրացրեց իր պարանոցը, ոտքի կանգնեց (նրա սմբակաձև ոտքերից շղթաները արդէն քանդուել էին), սկսեց թափահարել թևերը և շվմացրեց այն շվմոցով,

38362.62

որով նա կոչում էր առհասարակ իւրծառաներին և ստորադրեալներին։

Հաղիւ նա կարողացաւ շունչ քաշել, երբ նրա գլխավերևում բացուեց մի ծակ, որտեղից երևեցաւ կարմիր կրակ և սանդարամետների մի ամբողջ խումբ ներս խուժեց ծակից և շրջապատեց Բեհեղզեբուղին։ Սատանաների մէջ կային և մեծ և փոքր, գէր և նիհար, կարճ ու երկար պոչերով, ծուռ և ուղիղ պոզերով։

Սատանաներից մէկը, որ բոլորովին մերկ էր, ծալապապատիկ նստեց Բեհեղզեբուղի առաջ։ Նա չունէր ոչ բեխ, ոչ միրուք, ուսին ծղած էր մի շրջաթիկնոց (պէլերինա), նրա աչքերը վառվռում էին։ Նա միշտ ծիծաղում էր, պոչը դէս ու դէն շարժելով։

III.

— Այդ ի՞նչ է նշանակում, հարցրեց Բեհեղզեբուղը, ցոյց տալով վերև, ի՞նչ է կատարուում այնտեղ։

— Նոյնը, ինչ որ կատարուում էր միշտ, պատասխանեց պլպլուն սատանան։

— Բայց մի՞թէ կան մեղաւորներ, հարցրեց Բեհեղզեբուղը։

— Այո՛, կան, պատասխանեց սատանան։

— Իսկ ի՞նչ դրութեան մէջ է այն մարդու վարդապետութիւնը, որի անունը ես չեմ ուզում յիշել։

Պլպլուն սատանան այնպէս ուժգին կրճտացրեց իր ատամները, որ բոլոր սատանաները ծիծաղեցին։

— Վատ, բայց այդ վարդապետութիւնը մեզ չի խանգարում։ Նրանք չեն հետևում նրան, պատասխանեց սատանան։

— Զէ՞ որ այդ վարդապետութիւնը ազատում է նրանց մեզանից, այդ բանը վկայեց նրա մահը, ասաց Բեհեղզեբուղը։

— Ես փոփոխեցի նրան, ասաց սատանան, շարժելով իր պոչը։

— Ինչպէս փոփոխեցիր։

— Այնպէս, որ այլևս մարդիք չեն հետևում նրան, այլ հե-

տևում են իմ վարդապետութեան, իսկ իմ վարդապետութիւնը կոչում է նրա անուամբ։

— Բայց ի՞նչպէս դու այդ կատարեցիր։

— Կատարուեց ինքն իրան, իսկ ես միմեայն օգնում էի։

— Պատմիր ինձ կարճօրէն, ասաց Բեհեղզեբուղը։

Սատանան կախ դցեց գլուխը և դանդաղ կերպով սկսեց պատմել։

«Երբ կատարուեց այն սարսափելի գործը, որից յետոյ դժոխքը քանդուեց և մեր պետ ու հայրը հեռացաւ մեզնից, ես գնացի այն կողմերը, որտեղ քարոզւում էր այն վարդապետութիւնը, որը հագիւ մեզ չմատնեց կորստի։ Ես ուզում էի տեսնել, թէ ինչպէս են ապրում նոքա, որոնք հետևում են նրա վարդապետութեանը։ Ես տեսայ, որ նրա հետևողները բախտաւոր են և մեզ անմատչելի։ Նրանք չէին կռւում միմիանց հետ, չէին հրապուրում կանանց գեղեցկութեամբ, չէին ամուսնանում, իսկ եթէ ամուսնանում էին, վերցնում էին միմեայն մի կին։ Զկար սեպհական կալուած. ամեն բան հանրական էր, նրանք չէին պաշտպանւում ոսոխներից իսկ, չարիքը հատուցանում էին բարութեամբ։ Նրանց կեանքը այնքան լաւ էր, որ ուրիշ մարդիք աւելի և աւելի հրապուրւում էին նրանով. երբ ես տեսայ այս բոլորը, յուսահատուեցի և ուզում էի հեռանալ, բայց մի հանգամանք, որը ինքն ըստ ինքեան չնչին էր, ստիպեց ինձ մնալ։ Ես նկատեցի, որ այդ մարդկանց մարքերը զանազան էին. մի քանիսը անհրաժեշտ էին համարում թլպատուել և չուտել այն, ինչ որ զոհ էր բերւում կռքերին, իսկ միւս մասը պնդում էր, որ կարելի է և չթլպատուել, բայց ուտել ամէն բան։ Որովհետև գործը վերաբերւում էր Աստուածապաշտութեան, ես ներշնչեցի, որ ոչ մի կողմը չ'զիջի։

Նրանք հաւատացին ինձ և նրանց վէճը մեծ ծաւալ ստացաւ։

Մի մասը սկսեց բարկանալ միւսի վրայ, իսկ ես հաւատացնում էի երկու կողմերին էլ, որ նրանցից ամէն մէկին անհրաժեշտ է ապացուցանել իր վարդապետութեան ճշմարտութիւնը հրաշքներով։

Զնայելով այն բանին, որ հրաշքները չէն կարող ապացուցանել վարդապետութեան ճշմարտութիւնը, այնուամենայնիւ նրանցից ամէն մէկը ուզում էր ցոյց տալ իրենը ճիշտ։ Ահա այսպէս նրանք ինձ հաւատացին, իսկ ես ստեղծեցի նրանց համար հրաշքներ։

Ստեղծել հրաշքներ շատ էլ դժուար չէր։ Նրանք հաւատում էին ամէն մի բանի, ընդունում էին իմ ասածները իբրև ճշմարտութիւն։ Նրանցից մի քանիսը ասում էին, որ նրանք տեսան իրենց վախճանուած ուսուցչին, որ նրանց վրայ իջան հրեղէն լեզուներ և շատ բաներ։ Նրանք հնարում էին այնպիսի բան, որը ոչ մի ժամանակ չի եղել, ստախօսութիւններ էին անում յանուն այն մարդու, որը մեզ ստախօսներ անուանեց։ Նրանք չէին նկատում, որ իրենք մեզնից շատ են ստաբանում։ Մի մասը պախարակում էր միւսին ասելով. մեր հրաշքները իսկական են, ձերը ոչ. իսկ վերջինները պատասխանում էին նրա հակառակը։

Իմ գործը ընթանում էր յաջող. ես վախենում էի, մի գուցէ նրանք հասկանան իմ խաբէութիւնը։ Ես հնարեցի «եկեղեցին»։ Իսկ երբ նրանք ընդունեցին իմ հնարած եկեղեցին, ես հանգստացայ։ Ես հասկացայ, որ մենք փրկուած ենք և դժոխքը վերականգնուած է»։

IV.

— Ի՞նչ բան է «եկեղեցին», հարցրեց Բեհեղզեբուղը, չուզելով հաւատալ, որ իր ծառաները աւելի գիտուն են, քան ինքը։

— Երբ որ մարդիք ստաբանում են և զգում, որ ուրիշները չեն հաւատում իրենց, նրանք յիշելով Աստծուն, ասում են. «Աստուած վկայ է, որ ճիշտ եմ խօսում»։ Ահա, հէնց դա է եկեղեցին» միմիայն այն առանձնայատկութեամբ, որ մարդիք, որոնք ընդունում են իրենց «եկեղեցին», հաւատացած են, որ նրանք չեն մոլորւում իրանց քարոզներում, ուստի ամէն մի ասած բանից հրաժարուել չեն կարող։ Եկեղեցին այսպէս

է առաջանում. մարդիկ հաւատացած են և հաւատացնում են ուրիշներին, որ Աստուած խուսափելով այն բանից, որ Նրա դրուած օրէնքը սխալ չբացատրուի, ընտրել է այդ նպատակով առանձին մարդկանց։ Միմեայն այդ մարդիկ, նրանց կարծիքով, կարող են ճշտորէն բացատրել Աստուծոյ օրէնքը։ Ուրեմն մարդիկ, որոնք անուանւում են եկեղեցի, հաշուում են իրենց ճշմարիտ, ոչ թէ այն պատճառով, որ նրանց քարոզածը ճշմարտութիւնն է, այլ որ նրանք համարում են իրենց Աստուծոյ միակ օրինաւոր աշակերտներ։

Այս ընտրած հնարքը ունի նոյն պակասութիւնը և անյարմարութիւնը, ինչ որ ունէին հրաշքները. այդ մարդիկ սովոր են ճանաչել, որ նրանցից ամէն մէկը կազմում է ճշմարիտ եկեղեցու անդամ (այդպէս է եղել միշտ)։ Բայց նա ունի և մի առաւելութիւն. մարդիկ, որոնք խոստովանւում են, որ նրանք կազմում են «եկեղեցի» և այդ արդումենտի վրայ հիմնում են իրենց վարդապետութիւնը, չեն կարող այլևս հրաժարուել իրենց ասածներից, ինչքան էլ որ նրանց ասածը անմիտ չլինի և ինչ համոզմունքի էլ ուրիշները չլինեն նրանց ասածի մասին։

— Ինչու՞ եկեղեցին քարոզեց իր վարդապետութիւնը, յօդուտ մեզ, հարցրեց Բեհեղզեբուղը։

—Որովհետև, շարունակեց սատանան, ճանաչելով իրենց Աստուծոյ միակ ծառաներ, նրանք իրենց ձեռքն առին ամբողջ ժողովրդի ճակատագիրը և դարձան նրա միակ իշխողը և տիրապետողը։ Նրանք հպարտացան, մեծ մասամբ անբարոյականացան և շարժեցին ժողովրդի դայրոյթը։ Իբրև գործիք կռուելու իրենց թշնամիների հետ, նրանք հալածում էին, այրում էին, գործ էին դնում դանդաղ բռնութիւն այն մարդկանց վրայ, որոնք չէին հպատակւում նրանց։

— Այդ դրութիւնը ստիպեց նրանց աշխատել ամէն կերպով արդարացնել իրենց չար վարմունքները և խստութիւնները։ Նրանք այդպէս էլ վարուեցին։

V.

«Բայց չէ՞ որ դու ասացիր, թէ այդ վարդապետութիւնը

նը այնքան պարզ էր և հասկանալի, որ չէր կարելի ուրիշ կերպ պարզաբանել », ասաց Բեհեղզեբուղը չհաւատալով կարծես այն բանին, որ իր ծառաները կարող են իրանից շուտ ըմբռնել մի որևիցէ գործ։ Չէ՞ որ ասուած է. «Վարուիր ուրիշի հետ այնպէս, ինչպէս կուզէիր, որ քեզ հետ վարուեն»,—ի՞նչպէս բացատրել սա։

— Իմ խորհրդի շնորհիւ, նրանք վարուում են դանդաղ միջոցներով, պատասխանեց սատանան։ Մարդիկ պատմում են հետևեալ առակը։ Մի վհուկ, ագատելով մի մարդու չար վհուկից, դարձնում է նրան հացահատիկ։ Չար վհուկը ստանալով աքաղաղի կերպարանք, ուզում է կոցահարել հացահատիկը, բայց այդ միջոցին բարի վհուկը դում է հացահատիկը մի մեծ չափ ցորնի մէջ։ Չար վհուկը, չի կարողանում ոչ ուտել բոլոր ցորենը և ոչ էլ գտնել հացահատիկը։ Այսպէս էլ վարուեցին նոքա այն մարդու վարդապետութեան հետ, որը ուսուցանում է. «արա ուրիշին այն, ինչ որ կուզէիր անեն քեզ». իբրև աղբիւր Աստուծոյ օրէնքի, նրանք ընդունեցին 49 գիրք և այդ գրքերի ամէն մի խօսքը համարեցին Աստուծոյ և Սուրբ Հոգւոյ արդասիք։ Նրանք պարզ ճշմարտութիւնը այնպէս պատեցին կեղծ ճշմարտութեամբ, որ այլևս անկարելի դարձաւ ոչ ընդունել բոլորը միասին և ոչ գտնել նրանց մէջ ճիշտը։ Սա առաջին միջոցն է։ Երկրորդ միջոցը գործ է ածւում հազար տարուց վեր. նրանք սպանում են և այրում են նրանց, որոնք ցանկանում են բանալ ճշմարտութիւնը. թէև երկրորդ միջոցը գործածութիւնից կամաց կամաց դուրս է գալիս և նրանք այլևս չեն այրում մարդկանց, բայց այնպէս են թունաւորում ժողովրդի կեանքը, որ շատ քչերն են համածայնւում երևան հանել նրանց պակասութիւնները և չարիքները։ Իսկ երրորդ միջոցը ահա սա է. ընդունելով իրենց իբրև եկեղեցի, հետևաբար, համարելով իրանց անսխալական, նրանք երբոր հարկաւոր է, ուսուցանում են միանգամայն հակառակ աւետարանական սկզբունքներին և թոյլ են տալիս իրենց աշակերտնե-

րին լուծել դժուար խնդիրներ և հակաճառութիւններ ըստ նրանց հասկացողութեան:

Օրինակ Աւետարանում ասուած է. «դուք ունէք միմիայն մի ուսուցիչ Քրիստոս, իսկ երկնքում միմիայն մի Հայր, ուրեմն երկրում ոչ ոքի հայր չպիտի անուանէք, դուք ունիք միմիայն մի դաստիարակ—Քրիստոս, ուրիշին մի՛ք անուանիլ ձեզ դաստիարակ»: Իսկ նրանք ասում են. մենք ենք միակ հայրեր և դաստիարակներ: Նաև ասուած է. «եթէ ուզում ես աղօթել, աղօթիր ծածուկ և մենակ. Աստուած կլսի քո աղօթքը», իսկ նրանք սովորացնում են, որ հարկաւոր է միասին աղօթել եկեղեցիներում երգերով և ծնծղաներով: Աւետարանում ասուած է. «մի՛ երդուիր ոչ մի դէպքում», իսկ նրանք ուսուցանում են, որ պէտք է երդուել և հլու կերպով հպատակուել իշխանութեան, ինչ էլ որ իշխանութիւնը պահանջի: Կամ թէ ասուած է. «մի՛ սպանիր», իսկ նրանք ասում են, որ կարելի է և պէտք է սպանել թէ պատերազմում և թէ համաձայն կայացած դատավճռի:

Այսպէս վերջացրեց իր խօսքը սատանան: Նրա աչքերը փայլեցին և նա ուժգին ծիծաղեց:

— Դա շատ լաւ բան է, ասաց Բէհեղզեբուղը և ծիծաղեց նոյնպէս:

Բոլոր սանդարամետների հոհռոցը թնդացրեց օդը:

VI.

— Մի՞թէ այնտեղ տիրում է առաջուայ կարգ ու կանոնը, մի՞թէ այնտեղ կան անառակներ, աւազակներ և մարդասպաններ, ուրախացած հարցրեց Բէհեղզեբուղը: Չար ոգիները նոյնպէս ուրախացած, սկսեցին խօսել միմեանց հետ:

— Ոչ թէ առաջուայ պէս, այլ աւելի վատ է, գոռում է մէկը:

— Անառակները այժմ գտնւում են ուրիշ բաժանմունքներում, ոռնում է միւսը:

Այժմեան կողոպտողները աւելի անխիղճ են, քան առաջուանները, բղաւում է երրորդը:

— Մարդասպանների համար պատրաստած կրակը շատ քիչ է, գոռում է չորրորդը:

— Պարոններ, չի կարելի բոլորիս խօսել միանգամայն, թող պատասխանի նա, որին ես հարց կառաջարկեմ, բացականչում է Բէհեղզեբուղը. Թող դուրս գայ նա, ով որ կարգուած է հսկող անառակների վրայ և պատմի մեզ, թէ ինչպէս է վարւում նա այն մարդու աշակերտների հետ, որը արգելում է փոխել կին և քմահաճոյքով նայել կնոջ վրայ: Ո՞վ է անառակների հսկողը:—Ես, պատասխանում է մէկը և Բէհեղզեբուղի առաջ կանգնում է մի մոյգ սատանայ, ուռած դէմքով: Նա ծալապատիկ նստեց Բէհեղզեբուղի առջև և շարժելով անդադար պոչը, խօսեց այսպէս:

— Ես վարւում եմ մարդկանց հետ այն հնարքով, որը դուք մեզ սովորցրիք մարդկութիւնը մեր ձեռքը ձգելիս և եկեղեցական հնարքով: Վերջին հնարքով մենք օգտւում ենք այսպէս. մենք խաբում ենք մարդկանց և ասում. իսկական ամուսնութիւնը նա չէ, երբ մարդ և կին միանում են այլ նա է, երբ մարդիկ պճնազարդուած մտնում են անառականոցները և այնտեղ սեղանի շուրջը անց են կացնում զուարճութիւններով իրենց ժամանակը:

— Մենք ներշնչում ենք, որ սա է իսկական ամուսնութիւնը, նրանք մեզ հաւատում են և համոզւում, որ ամէն մի ամուսնութիւն, որը դուրս է այս պայմաններից, ոչ այլ ինչ, եթէ ոչ պարտաւորեցուցիչ բաւականութիւն է կամ զուտ զգայնական պահանջ:

Ահա այսպէս մարդիկ ոչ մի բանից չամաչելով, պարապում են ամեն տեսակ զուարճութիւններով:

Սատանան ընդհատեց իր խօսքը և կարծես աշխատում էր մեկնել, թէ ինչ տպաւորութիւն թողեց նրա պատմութիւնը Բէհեղզեբուղի վրայ:

Բեհեզզեբուղը շարժեց գլուխը ի նշան համակրանքի, որից յետոյ մոյգ սատանան շարունակեց իր խօսքը.

Շնորհիւ այս գայթակղեցուցիչ միջոցների, մենք ցոյց ենք տալիս ամենափայլուն յառաջադիմութիւն: Երեւակայելով որ կարելի է մի կնոջ հետ կապուել մաքուր ամուսնական կապով շատերի հետ յարաբերութիւն ունենալուց յետոյ եւ, նրանք փոխում են հարիւր կին և այդ ժամանակամիջոցում նրանց համար անբարոյականութիւնը մի սովորութիւն է դառնում, որը շարունակւում է և եկեղեցական ամուսնութիւնից յետոյ: Եթէ եկեղեցական ամուսնութեան պահանջները մի որևիցէ պատճառով թւում են նրանց խիստ, կամ անտանելի, այն ժամանակ նրանք ամէն կերպ աշխատում են որոնել միջոցներ նրանցից ազատուելու:

Սատանան լռեց. Նրա բերնից կաթում էր լորձունքը: Նա իր պոչի ծայրով մաքրեց բերնի լորձունքը. գլուխը շուռ տուեց միւս կողմը և չռեց աչքերը Բեհեզզեբուղի վրայ:

VII.

— Շատ պարզ է և հասկանալի, ասաց Բեհեզզեբուղը: Համակրում եմ. Թող դուրս գայ կողոպտողների վերակացուն:

Դուրս եկաւ մի բարձրահասակ յաղթանդամ սատանան երկար ու ծուռ պոզերով, ոլորած բեխերով—ծուռ ու մու թաթերով և սպասում էր հարցին:

Բեհեզզեբուղը հարցրեց:—Ինչպէս էք դուք գայթակղեցնում այն մարդկանց, որոնց ուսուցիչը քարոզում էր նրանց ապրել երկնային թռչունների նման, տալ շապիկ ցանկացողին և վերարկուն և վերջապէս մեղքերից ազատուելու համար բաժանել մարդկանց մէջ իր բոլոր ունեցածը:

— Այստեղ մենք հետևում ենք նոյն օրինակին, որին հետևեց մեր վեհապետ—հայրը Սաւուղին թագաւոր ընտրելու ժամանակ, պատասխանեց յաղթանդամ սատանան: Ինչպէս առաջ, մենք այժմ խորհուրդ ենք տալիս մարդկանց և ներշնչում ենք նրանց, որ փոխանակ դադարելու միմեանց հարստա-

հարել աւելի լաւ է տալ մի մարդու լիակատար իշխանութիւն միւսին կեղեքելու: Այս մարդիկ, նրանց ստորադրեալները և վերջինների ծառաները կողոպտում են միմեանց փոխադարձաբար: Այդ դէպքերում ստեղծւում են այնպիսի կանոններ, յարմարութիւններ շնորհիւ որոնց անգործ փոքրամասնութիւնը կեղեքում է գործող մեծամասնութեանը և մնում է բոլորովին անպատիժ: Այն հնարքը, որը մենք գործ ենք ածում, հնադարեան է: Նրան մենք տուել ենք այժմ ընդհանուր և աւելի գաղտնի կերպարանք, շինել ենք երկարատև և ամուր, ինչպէս տարածութեան, նոյնպէս և ժամանակի վերաբերմամբ:

Ընդհանուր պիտի հաշուել այդ հնարքը այն տեսակէտից, որ նրանք, շնորհիւ մեզ հնազանդւում են, հակառակ իրենց ցանկութեան, ոչ նրան, որին ընտրել էին, այլ մի որևիցէ անձնաւորութեան:

Գաղտնի—այն տեսակէտից, որ կեղեքուած մարդիկ չեն տեսնում իրենց կեղեքողներին, շնորհիւ զանազան հարկերի, մանաւանդ անուղղակի տուրքերի աննշմար կարգաւորութեան և դասաւորութեան: Աւելի շատ նա գործածական է տարածութեան վերաբերմամբ. այսպէս կոչուած քրիստոնէական ազգերը, չբաւականանալով իրենց երկրում կատարած յափշտակութիւններով և կողոպուտներով, անցնում են ուրիշ—ոչ քրիստոնեայ երկիրներ և Քրիստոնէութիւն տարածելու պատրուակով, կեղեքում են և վերցնում են այդ ազգութիւններից ամէն բան, ինչ որ կարելի է վերցնել:

Ժամանակի վերաբերմամբ այդ հնարքը աւելի տարածուած և երկարատև է, շնորհիւ պետական և հասարակական փոխառութիւնների կարգաւորութեան, որովհետև կողոպտւում է ոչ թէ ներկայ, այլ կողոպտուելու է նաև ապագայ սերունդը: Մենք վերջապէս ամրացրինք այդ հնարքը և ուրիշ կողմից. գլխաւոր կեղեքիչները անձեռնմխելի են, իսկ խեղճ մարդիկ չեն համարձակւում հակառակել նրանց. օրինակ ես յիշում եմ հետևեալ դէպքը. մի շարք տգէտ, իրաւազուրկ, յիմար և անբարոյական կանանց մէջ կար մի սոսկալի կին, որը ի բաց անբարոյական լինե-

լուց, հռչակուած էր որպէս մարդասպան. իր ամուսնու և ժա-
ռանգի. բայց մարդիկ չյարգեցին Նրա դուՙչը, չպատժեցին
Նրան, ինչպէս որ հարկաւոր էր պատժել և այլն: Մարդիկ
շատ տարիներ ստրկաբար հնազանդւում էին Նրան, թոյլա-
տրելով Նրան և Նրան սիրահարներին ոչ թէ միմիայն
մարդկանց գոյքը յափշտակել այլ և Նրանց ազատութիւնը
Մեր ժամանակուայ կողոպուտները և յափշտակութիւնները
հազիւ թէ կարող են կազմել մի միլլիոնական մասը այն յա-
փշտակութիւնների, որոնք կատարւում են և կատարւում էին
լիազօր մարդկանց ձեռքով. Ներկայումս յափշտակութիւնն
և կողոպուտը այնպիսի խիստ դեր են կատարում, որ ամ-
բողջ մարդկութեան կեանքի Նպատակը դառել է կողոպուտ
և յափշտակութիւն:

VIII.

— Սա, ի հարկէ, լաւ բան է, ասաց Բեհեզգերուզը, խո
ո՞վ է մարդասպանների հսկողը:

— Ես, պատասխանեց մի արիւնաներկ սատանայ, ահռելի
դուրս ցցուած ժանիքներով, սուր պոզերով և ուղղաձիգ
պոչով:

— Պատմիր մեզ, ասաց Բեհեզգերուզը, թէ ինչպէս ես դո
ստիպում մարդասպանութիւն գործել այն մարդու աշակերտ-
ներին, որը ասել է. «չարութեան տեղ գործէք բարութիւն
սիրեցէք ձեր թշնամիներին»:

— Այդ Նպատակի համար ես ունեմ մի լաւ միջոց, ասա
խլացուցիչ ձայնով արիւնաներկ սատանան, ես գրգռում եմ
մարդկանց դէպի շահասիրութիւն, կռուարարութիւն, վրէժ-
քէն, հպարտութիւն. սա իմ հին հնարքս է:

Ի բաց այդ ես Ներշնչում եմ մարդկանց որ սպանութեան
պակասեցնելու ամենահեշտ միջոցը—փոխադարձ մարդասպանու-
թիւնն է. դա աւելացնում է մեզ համար մարդասպանների թիւ
Մարդասպանների մեծ քանակութիւն է տալիս մեզ եկեղեցակա
անսխալականութիւնը, քրիստոնէական ամուսնութիւնը և հա

ւասարութիւնը: Համեմատաբար աւելի մեծ զոհեր տալիս էր և
տալիս է մեզ այն ուսումը որը կոչւում է «եկեղեցական ան-
սխալականութիւն». այդ դոգմայի հետևողները խիստ հալա-
ծում են Նրանց, որոնք չեն ընդունում այդ ուսումը և
Նրանց սպանելը Աստուծուն հաճելի գործ են համա-
րում. Նրանք կտորում և այրում էին հարիւր հազար-
ներով. պէտք է ասել որ մարդիկ, որոնք այրում և սպա-
նում էին ճշմարտութեան հետևողներին, համարում են վեր-
ջիններին մեր ծառաներ, չնայելով որ իրականապէս Նրանք
մեր ամենաւատանդաւոր թշնամիներն են:

Նոքա, որոնք սպանում էին և վառում էին ի-
րենց հակառակորդներին խարոյկի վրայ, համարում էին իրենց
Աստուծոյ կամքի սուրբ կատարողներ: Այսպէս էին վարւում
հին ժամանակ: Ներկայումս մեծ քանակութեամբ սպանու-
թիւններ է արտադրում եկեղեցական ամուսնութեան և
հաւասարութեան ուսումը: Շնորհիւ եկեղեցական ամուսնու-
թեան, հաճախ պատահում է երկու դէպք. կամ կինն է սպա-
նում մարդուն, կամ մարդն սպանում կնոջը և կամ թէ
մայրը սպանում է իր որդուն:

Առաջին դէպքը պատահում է այն ժամանակ, երբ եկե-
ղեցական մի որևիցէ օրէնք կամ ծէս խիստ Նեղիչ է
թւում Նրանց, իսկ երկրորդ դէպքը, այսինքն որդու սպանու-
թիւնը մօր ձեռքով պատահում է այն ժամանակ, երբ որդին հա-
մարւում է ապօրինի: Այդ սպանութիւնները կատարւում են
միշտ: Վերջապէս այն սպանութիւնները, որոնք «քրիստոնէա-
կան հաւասարութեան» տարածման արդիւնք պիտի հաշուել,
պատահում են թէև պարբերաբար, բայց և այնպէս ամէն մի
անցած տալիս են սպանութիւնների մի սարսափելի քանակու-
թիւն: Այդ վարդապետութիւնը ուսուցանում է, որ բոլոր
մարդիկ, ըստ օրէնքի, հաւասար են: Կողոպտուած մարդիկ
զգում են, որ դա ճիշտ չէ, ապստամբում են և յարձակւում
են իրենց կեղեքողների վրայ: Այն ժամանակ ըսկսւում են
փոխադարձ սպանութիւններ: Իսկ շնորհիւ դորա մենք ա-
ռատօրէն հնձում ենք մեր հունձը:

IX.

— Բայց ի՞նչպէս էք դուք հարկադրում մարդոց գու
գալ պատերազմի դաշտը կռուելու, երբ որ նրանց ուսուցիչ
պատուիրել է նրանց սիրով վերաբերուել դէպի թշնամիները
հարցրեց Բեհեղզեբուղը:

Արիւնաներկ սատանան կրճտացրեց իր ատամները, բա
թողեց իր բերնից մի դունդ կրակ և ուրախ կերպով շարու
նակեց:—Ահա թէ ինչպէս ենք մենք գործում: Ամէն մի ազ
գութեան հաւատացնում ենք, որ նա բարձր է միւսներից
ամենալաւն է. «Deutschland über alles*) Ֆրանսիան, Ռու
սաստանը — «uber alles» և այս ազգը (անունը յիշեցի) պ
տի իշխէ բոլոր մնացածների վրայ: Այս հիման վրայ ամ
մի ազգ, որին մենք ներշնչում ենք, պատրաստւում է ինքն
պաշտպանութեան միւսի դէմ, և այսպէս առաջ է գալ
փոխադարձ թշնամութիւն: Իսկ ինչքան ինքնապաշտպանու
թեան պատրաստութիւնները մեծ ծաւալ են ստանում, նոյ
քան էլ մեծ ծաւալ են ստանում փոխադարձ թշնամութիւնն
հետևապէս այն մարդու հետևողները, որը մեզ մարդասպանն
անուանեց, բոլորը պատրաստւում են մարդասպաններ դա
նալու և պարապում են մարդասպանութեամբ:

X.

Բեհեղզեբուղը երկար լռելուց յետոյ ասաց.—դա խել
պէս սրամտութիւն է:

— Բայց զարմանալի է, թէ ի՞նչու գիտուն մարդի
որոնք այդ գործով չեն պարապում, չնկատեցին ուսման հ
գաղրջումը և չվերականգնեցրին նրան:

— Նրանք չեն կարող այդ անել, ասաց մի պատմուճան
ւոր սատանայ, նիհար դէմքով և ծուռ ցցուած ականջներո
Ինչո՞ւ, հարցրեց Բ. խստօրէն, կարծես թէ անբաւական մն
լով սատանայի ինքնահաւանութեամբ:

*) Գերմանեան—բարձր է բոլորից.

Պատմուճանաւոր սատանան, առանց շփոթուելու նստեց Բ. առաջ արևելեան ձևով—ոտքերը ծալապատիկ և սկսեց խօսել մեղմ ձայնով:

— Որովհետև ես միշտ աշխատում եմ դարձնել նոցա ուշադրութիւնը ոչ այն կարևոր բաների վրայ, որը նրանք կարող են իմանալ և պէտք է իմանան, այլ այն բաների վրայ, որը նրանց համար հարկաւոր չէ և որը նրանք ոչ մի ժամանակ չեն կարող հասկանալ:

— Ի՞նչպէս ես դու այդ կատարում:

— Ես այդ կատարում եմ ըստ ժամանակի, պատասխանեց պատմուճանաւոր սատանան: Հին ժամանակ ես հաւատացնում էի մարդկանց, որ անհրաժեշտ է պարզել Երրորդութեան մութ կողմերը, Քրիստոսի ծագումը, նրա բնութիւնը, Աստուծոյ յատկութիւնները և այլն և այլն:

— Իմ խորհուրդը առիթ տուեց նրանց երկար միմեանց հետ վիճելու. շնորհիւ այդ վէճերի, նրանք չէին մտածում այն բանի մասին, թէ ինչպէս է հարկաւոր ապրել աշխարհում: Իսկ չմտածելով կեանքի մասին, նրանք կարիք էլ չէին զգում ըմբռնել այն, ինչ որ խօսում էր նրանց ուսուցիչը կեանքի մասին:

— Երբ որ նրանք իրենց վէճի մէջ այնքան շփոթուեցին, որ մինչև անգամ չէին հասկանում իրենց ասածը, ես համոզեցի, որ նրանց համար ամենակարևոր բանը Արիստոտել փիլիսոփայի գրուածքների ուսումնասիրութիւնն է. մի քանիսին խորհուրդ էի տալիս, իբրև շատ կարևոր գործ— որոնել այն քարը, որի օգնութեամբ կարելի է պատրաստել ոսկի, գտնել այն դեղափոշին, որը բժշկում է մարդկանց և անմահացնում է նրանց: Ամենախելօք և գիտուն մարդիկ սկսեցին պարապել այդ գործով, իսկ այս արհեստով չհետաքրքրուող մարդկանց ես ստիպեցի պարապել հետազօտութիւններով. իմանալ արեգակն է պտտում երկրի շուրջը, թէ երկիրը արեգակի: Երբ նրանք իմացան, որ երկիրն է պտտում արեգակի շուրջը, ի յարկէ շատ ուրախացան և այն ժամանակից

Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР

սկսած պարապում են եռանդուն կերպով աստղերով և նրան
հեռաւորութեամբ, թէև հաւատացած են, որ այդ հեռաւ-
րութիւնները անսահման են և այդ բոլորի իմանալը միանգա-
մայն աւելորդ է նրանց համար. իբաց այդ, ես նրանց հետ
քրքրեցի իմանալ, թէ ինչպէս են ստացել իրենց ծագում
դազանները, որդերը, բոյսերը և մանր—մանր կենդանիներ
Զնայելով, որ սա էլ աւելորդ է և անկարելի է իմանալ, որ
հետև կենդանիների թիւը նոյնքան մեծ է, ինչքան և աստ-
ղերինը, այնու ամենայնիւ նրանք մեծ ջանք են դործ դնում
այդպիսի հետազոտութիւնների վրայ: Ինչքան մեծ է լ
նում նրանց զարմանքը, երբ տեսնում են, որ քանի եռա-
դով են զբաղւում այդպիսի անօգուտ առարկաներով, այ
քան շատ բան է մնում հետազօտելու: Հետազօտութես
հորիզոնը միշտ լայնանում է, առարկաները աւելի ու աւ
են բարդանում, իսկ ձեռք բերած դիտութիւնները մնում են կա
քի համար անշահաւէտ: Նրանք անուշադիր են դէպի այդ հա
գամանքը և համարձակօրէն շարունակում են իրենց հետ
զօտութիւնները, քարոզում են, դրում են, տպում են և թար
մանում մի լեզուից միւսը շատ անգամ այնպիսի դ
տաբանութիւններ և հետազօտութիւններ, որոնք ոչ մէկ
օգուտ չեն բերում, իսկ եթէ պատահում են և օգտաւէտ
խատութիւններ—դրանք ուղղուած են լինում չքաւոր մեծ
մասնութեան դրութիւնը վատացնելու, իսկ հարուստ փոքր
մասնութեան զուարճութիւնները աւելացնելու:

— Ես ներշնչեցի նրանց, որ նրանք չեն կարող ըմբռ
հոգևոր կեանքի օրէնքը, ես հաւատացրի նրանց, որ ամեն
անհրաժեշտ բանը կեանքի օրէնքների հիմնումն չէ, ինչպ
որ քարոզում է Քրիստոսի վարդապետութիւնը: Ես համոզ
ցի նրանց, որ ամէն մի կրօնական վարդապետութիւն, ի թիւ
րոց և Քրիստոնէականը, միմեայն մոլորութիւն և նախապաշ
մունք է: Իսկ ով ցանկանում է իմանալ, թէ ինչպէս պէ
է ապրել, պարտաւոր է սովորել իմ վարդապետութիւնը, ա

խորհուրդ է տալիս ուսումնասիրել մարդկանց կեանքի վատ
կողմերը անցեալում:

— Փոխանակ հետևել Քրիստոսի խորհրդին՝ անձամբ աշ-
խատել բարւոքել իրենց կեանքը, նրանք ուսումնասիրում են
առաջուայ մարդկանց կեանքը և այդ հետազոտութիւնների վրայ
հիմնուած, մշակում են նոր օրէնքներ, որոնցով և դեկա-
վարւում են ամբողջ կեանքի ընթացքում: Ես նրանց խաբելու
նպատակով ներշնչեցի, որ դիտութիւնը ունի մի ժառանգորդա-
կանութիւն, որը կոչւում է «ուսում»: Այդ ուսման հաստատ-
թիւնները անսխալական են համարւում: Նրա հետևողները
իրենց անուանում են նոյնպէս անսխալական և այդ հիման
վրայ շատ յիմար մտքեր յայտարարում են իբրև աներկբայե-
լի ճշմարտութիւն:

Իյարկէ, վերաբերուելով մեծ պատւով և յարգանքով դէ-
պի իմ հնարած վարդապետութիւնը, նրանք հեռանում են
այն վարդապետութիւնից, որը հաղիւ թէ մեզ կորստի չմատ-
նեց:

XI.

Շատ բարի, ասաց Բեհեղզեբուղը, ձեզանից ամէն մէկը
արժանի է վարձատրութեան և կստանայ իր պարգևը:

Իսկ մեզ մոռացաք, միաձայն գոչեցին մնացած սատա-
նաները:

Բեհեղզեբուղը հարցրեց նրանց: Դուք ի՞նչով էք պարա-
պում:

— Ես նշանակուած եմ տեխնիքական կատարելագործու-
թեան վերակացու:

— Ես դործի բաժանման:

— Ես ճանապարհների հաղորդակցութեան:

— Ես տպագրութեան:

— Ես արուեստի:

— Ես բժշկութեան:

— Ես մշակութեան (культура):

— Ես դաստիարակութեան:

— Ես մարդկանց պակասութիւններ ուղղող։

— Ես մարդկանց շշմեցնող։

— Ես բարեգործութիւնների հսկող։

— Ես հասարակավարութեան (соціализма)։

— Ես կանանց իրաւունքների պաշտպան։

— Պարո՛ններ, այդպէս չի կարելի, թող ամեն մէկը պատասխանի իմ հարցերին առանձին և կարճօրէն պատմի իր գործունէութեան մասին։

— Սկսի՛ր դու, բղաւեց Բենհեզգերուզը, դառնալով դէպի տեխնիքական կատարելագործութեան սատանային։

— Ես ներշնչում եմ մարդկանց, որ ինչքան նրանց պատրաստած առարկաների քանակութիւնը լինի մեծ և շուտ կատարած, այնքան լաւ է։

Մարդիկ սկսում են աշխատել, շատ անգամ կորցնու են իրենց առողջութիւնը, արտադրում են մեծ թւով առարկաներ, չնայելով որ այդ առարկաները շատ անգամ լինու են անպէտք պատուիրատուների համար և անմատչելի այ մարդկանց համար, որոնք պատրաստում են։

— Բարի է, ասաց Բենհեզգերուզը և դարձաւ դէպի գոր ծի բաժանման վերակացուին։

— Ես ներշնչում եմ մարդկանց, որ որովհետև առար կաները կարելի է աւելի շուտ պատրաստել մեքենաներո քան թէ մարդկանցով, ուրեմն պէտք է մարդկանց դարձնե մեքենայ։ Նրանք համոզւում են և առում իրենց հետ անդ թարար վարւողներին։

— Սա էլ լաւ է, իսկ դու ի՞նչ ես շինում։ դարձաւ Բե հեզգերուզը դէպի ճանապարհների հաղորդակցութեան վերա վերակացուին։

— Ես ներշչում եմ մարդկանց, որ նրանց բարօրութեա համար անհրաժեշտ է կարելոյն չափ շուտ-շուտ տեղափոխ ուել մի տեղից միւսը։ Իսկ մարդիկ, փոխանակ իրենց կեա քը բարեկարգելու մի որևիցէ տեղում, մեծ մասամբ վարու

են թափառական կեանք և մինչև անգամ պարծենում են, որ մի ժամում անցնում են 50 վերստից աւել։

Բենհեզգերուզը նրան էլ գովասանեց։

Դուրս եկաւ տպագրութեան սատանան և յայտնեց, որ նա իր բոլոր ոյժը և ջանքը գործ է դնում տպելու այն բոլոր յիմարութիւնները, որոնք կատարւում են աշխարհում։

Բժշկութեան սատանան յայտնեց, որ նա ամեն մի մարդու դրդում է պարապել իր մարմնի հոգատարութեամբ, իբրև ամենակարևոր գործով։ Բայց որովհետև մարմնի հոգատարութիւնը մեծ է, ուստի նրանք, որոնք պարապում են իրանց մարմնի հոգացողութեամբ, շատ անգամ մոռանում են ոչ թէ միմեանց ուրիշների կեանքի մասին, այլ և նոյն իսկ իրանց կեանքի մասին։

Արուեստի սատանան ասաց, թէ նա մարդկանց մէջ վեհ զգացմունքներ առաջացնելու պատրուակով, փայփայում է նրանց կրքերը, ներկայացնելով այդ կրքերը ամենահրապուրիչ եղանակով։

Մշակութեան սատանան պատմեց, որ նա բոլոր վերոյիշեալ—տեխնիքական կատարելագործութեան, գործի բաժանման, ճանապարհների հաղորդակցութեան, տպագրութեան, բժշկութեան և արուեստի սատանաների գործերից օգտուելը—ներշնչում է մարդկանց իբրև մի առաջինութիւն. նա, ով ունի այդ բարոյական կորովը, պիտի բաւականանայ իր վիճակով և չ՚ձգտի լինել աւելի լաւ։

Դաստիարակութեան սատանան բացատրեց, որ նա ներշնչում է, թէ ինչպէս մարդ ինքը, վարելով վատ կեանք և չհասկանալով լաւ կեանքի իմաստը, կարող է երեխայոց լաւ մարդիկ կրթել։

Մարդկանց ուղղող սատանան ասաց, որ նա սովորեցնում է, թէ ինչպէս անբարոյական մարդիկ կարող են ուղղել անբարոյականներին։

Շշմեցնող սատանան ներշնչում է, որ փոխանակ ազատուելու կեանքի չարչարանքներից, աւելի լաւ է գործ ածել

բթացնող ափիոնը, գինի, ծխախոտ, մորֆին և այլն, որովհետև. սրանց ազդեցութեան տակ նրանք աւելի ուրախ կզգան իրենց։

Բարեգործութեան սատանան պատմեց, թէ ինչպէս նա աշխատում է մարդկանց հեռացնել բարեգործութիւններից, թէ ինչպէս նա ներշնչում է, որ մարդս առաքինի է դառնում, երբ կողոպտում է պուդ, իսկ տեղը տալիս մի քանի մսխալ։

Հասարակավարութեան սատանան ասաց, թէ նա հասարակական կեանքի բարեկարգութիւնը խանգարելու համար սերմանում է մարդկանց դասակարգերի մէջ թշնամութիւն։

Կանանց իրաւունքների պաշտպանը գովում է իրան այն բանում, որ նա ոչ թէ միմեայն զանազան դասակարգերն է միմեանց հետ թշնամացնում, այլ տարածում է այդ թշնամութիւնը նաև մարդկային սեռի մէջ։

Ամեն կողմից լսւում են ձայներ։ — Ես նորաձևութեան (мода), ես ճոխութեան, ես, ես, ես... և բոլորը շրջապատում են Բեհեզզեբուղին։

— Միթէ դուք կարծում էք, որ ես այնքան ծեր ու յիմար եմ, որ չեմ հասկանում — երբ մի վարդապետութիւն կեղծ է, այն ժամանակ ամեն ինչ, որը մեզ վնասել կարող էր, բերում է միմեայն օգուտ, բացականչեց Բեհեզզեբուղը։

— Շնորհակալ եմ բոլորից, ասաց նա և ոտքի կանգնեց։ Սատանաները շրջապատեցին, նրան մի ծայրում կանգնեց այն սատանան, որ ուսին ձգած ունէր շրջաթիկնոց, իսկ միւսում — պատմուճանաւոր սատանան։

— Բոլոր սատանաները ձեռք ձեռքի տուած, շրջապատեցին Բեհեզզեբուղին. Սկսւեց ծիծաղ, սուլոց, երգ, պար և այլն։ Իսկ վերևից լսւում էին լաց, ճիչ, հառաչանք և ատամների կրճտոց։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0316822

14075